


Ռազմական գիտության հայեցակարգի անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանունակությունն ապահովելու համատեքստում

Հովհաննիսյան Հայկ Հ.

Ռազմական գիտությունների թեկնածու, դոցենտ, պահեստազորի գնդապետ, ռազմագիտակրթական քաղաքականության վարչության ռազմական գիտության բաժնի գլխավոր մասնագետ, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարություն (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0000-0002-1520-9224>
hayk.hovhannisyan79@gmail.com

ՀՏԳ 355; EDN: EEVZRV

DOI: 10.58587/18292437-2025.3-14

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Ռազմական գիտություն, հայեցակարգ, պաշտպանության գիտական ապահովում, ռազմական գիտության համակարգ, միջգերատեսչական համագործակցություն

Необходимость концепции военной науки в контексте обеспечения обороноспособности Республики Армения

Оганесян Гайк О.

кандидат военных наук, доцент, полковник запаса.

Главный специалист отдела военной науки управления политикой военной науки и образования, Министерство обороны Республики Армения (Ереван, РА)

Аннотация. В статье обосновывается необходимость разработки и внедрения концепции военной науки Республики Армения, как стратегический документ в обеспечении обороны и военной безопасности государства. Подчеркивается роль военной науки, как системообразующий элемент оборонной политики, призванный обеспечить научно-технологическое сопровождение строительства армии и процессов подготовки и применения вооруженных сил.

В статье также представлены цель концепции, задачи, направленные на достижение данной цели, а также принципы и необходимость систематизации межведомственных усилий и необходимость новаторской направленности.

Ключевые слова и словосочетания: Военная наука, концепция, научное обеспечение обороны, система военной науки, межведомственное сотрудничество

The Necessity of the Concept of Military Science in the Context of Ensuring the Defence Capability of the Republic of Armenia

Hovhannisyan Hayk H.

PhD of military sciences, Associate Professor, Reserve Colonel,

Chief Specialist, Department of Military Science, Department of Military scientific and Educational Policy, Ministry of Defense, of Republic of Armenia (Yerevan, RA)

Abstract. The article justifies the need to develop and implement the concept of military science in the Republic of Armenia as a strategic document in the process of state defence and military security. The role of military science as a system – creating element of defense policy is emphasized, designed to provide scientific-technological support for the processes of military construction, preparation and application of the armed forces.

The article also presents the purpose of the concept of military science, the problems aimed at achieving it, as well as the principles, the need for an institutional approach, coordination of interdepartmental efforts and innovation.

Keywords & phrases: Military Science, scientific support for defense, concept, military science system, interagency cooperation.

Նախաբան

Ռազմական գիտությունն ընդհանուր առմամբ պետության պաշտպանունակությունն* ապահովելու նպատակով իրականացվող տեսական գիտելիքների և պրակտիկ մշակումների հա-

մախումբ է: Այն իր մեջ ներառում է պատերազմի վարման սկզբունքների, ռազմավարությունների, մարտական գործողությունների վարման մարտավարության հետազոտությունները, ինչպես նաև ռազմական ոլորտի կազմակերպման և կառավարման հարցերը: Ժամանակակից աշխարհաքաղաքական մարտահրավերների պայմաններում ռազմական գիտությունն առանցքային

* Պաշտպանունակություն՝ ինքն իրեն պաշտպանելու ունակություն ունեցող, ինքնապաշտպանության ընդունակ [7]:

դեր է խաղում ազգային անվտանգության և զինված ուժերի կայուն զարգացման գործում:

Ռազմական գիտության զարգացումն անցել է մի քանի փուլով, հնում փորձի էմպիրիկ կուտակումից մինչև XX-XXI դարերում որպես ինքնուրույն գիտակարգ ձևավորումը: Դրանում մեծ է այնպիսի տեսաբանների ներդրումը, ինչպիսիք էին Կլաուզեֆը, ժոմինին, Սվեչինը և այլ: XXI դարի սկզբում տեղի ունեցած և մինչ այսօր շարունակվող գիտատեխնիկական առաջընթացը անշեղորեն իր ազդեցությունն է թողել ռազմական դոկտրինների և հայեցակարգերի ձևավորման ու զարգացման վրա:

Ինչպես նշվում է Հայաստանի Հանրապետության բանակի կերպափոխման հայեցակարգի մաս III-ում, «ձ զինված ուժերի կազմավորման սկզբից ևեթ հետին պլան է մղվել Հայաստանում սեփական գիտությունը զարգացնելու անհրաժեշտությունը [1]: Հայաստանի Հանրապետությունում ռազմական գիտությունը պետք է դառնա ռազմավարական գործիք պաշտպանունակության ապահովելու հարցում: Ռազմական գիտության հստակ ձևակերպված հայեցակարգի բացակայությունը սահմանափակում է ռազմական ոլորտի տեսական և կիրառական հետազոտությունների զարգացումը: Այս առումով բանակի կերպափոխման հիմնական թիրախներից է հանդիսանում սեփական ռազմական գիտությունը զարգացնելու բավարար ներուժի ապահովումը, բանակաշինության կազմակերպումը հիմնարար գիտական և մեթոդական հենքի վրա [1]: Այս մասին վկայում է նաև այն փաստը, որ պատմականորեն Հայաստանի ռազմարվեստը ձևավորվել է արտաքին սպառնալիքների ազդեցության ներքո, ինչը բերել է հարուստ մարտական փորձի կուտակմանը, սակայն ցածր մակարդակի վրա է մնացել դրա համակարգանացումը: 1991 թ.-ի անկախության վերականգնումից հետո Հայաստանում չստեղծվեց ռազմական ոլորտի միասնական ազգային գիտական հենք: Արցախյան ռազմական գործողությունների ընթացքն ու արդյունքները ցույց տվեցին ռազմական փորձի խորը գիտական վերլուծության և ռազմական մտքի սեփական դպրոցի մշակման անհրաժեշտությունը:

Արդի պայմաններում Հայաստանի ռազմական գիտությունը պետք է ընդգրկի ոչ միայն ռազմավարական, օպերատիվ և մարտավարական հարցերը, այլև կիրառական գիտության, հիբրիդային գործողությունների, ռազմական տնտեսության պլանավորման և տեխնոլոգիաների դերը և պատահական չէ, որ բանակի կերպափոխման հայեցակարգի նպատակին հասնելու հիմնական բաղադրիչների շարքում ընդգրկված է հայրենական ռազմական գիտության զարգացումը [1]:

Չարգացած ռազմական միտք ունեցող առաջատար պետություններում ռազմական գիտությունը ազգային պաշտպանական ռազմավարությունների առանցքային տարրն է: Միևնույն ժամանակ վստահորեն կարող ենք փաստել, որ Հայաստանում դրա զարգացումը մնում է դրավազային մակարդակում: Համեմատության համար հարկ ենք համարում նշել, որ ռազմական սպառնալիքի բարձր մակարդակ ունեցող առաջատար երկրների մեծամասնությունն ունեն ռազմական պլանավորման համակարգին ինտեգրված գիտահետազոտական ինստիտուտներ և կենտրոններ: Հաշվի առնելով այդ երկրների փորձը, որոնք կարողացել են ադապտացնել սեփական ռազմական գիտությունը փոփոխվող պայմաններին, ինչպես նաև սեփական հայեցակարգի մշակման բարձր կարևորությունը, կարող ենք պնդել, որ Հայաստանի Հանրապետությունն իրոք կարիք ունի ռազմական գիտության միասնական հայեցակարգի ընդունման, որ հիմնված կլինի ազգային շահերի, աշխարհաքաղաքական իրողությունների և անվտանգության ժամանակակից մարտահրավերների վրա: Համաձայն ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության, պաշտպանական քաղաքականության հիմնական նպատակն է Հայաստանի պաշտպանության ապահովման գերակայությունների սահմանումն ու իրականացումը՝ ռազմական սպառնալիքները կանխորոշելու, դրանք քաղաքական-դիվանագիտական գործիքակազմով կանխարգելելու, ինչպես նաև պաշտպանական կարողություններով զսպելու և չեզոքացնելու միջոցով: Այս առաքելությունն իրագործվում է ռազմական կարողությունների և միջոցների համալիր զարգացման, դրանց առաջանցիկ կիրառման միջոցով: Պաշտպանական ոլորտի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է արդիականացնել զինված ուժերը, զարգացնել զինված ուժերի կառավարման և ղեկավարման համակարգը, ընդլայնել զինված ուժերի կարողությունները և բարձրացնել դրանց ինստիտուցիոնալ արդյունավետությունը, առանցքային ենթակառուցվածքների պաշտպանվածության և երկրի կիրառական գիտության մակարդակը, զարկ տալ ռազմարդյունաբերության զարգացմանը նպաստող գիտատեխնիկական և տեխնոլոգիական առաջընթացին, ինչպես նաև զարգացնել երկրի զորահավաքային համապարփակ կարողությունները [2]: Այս առումով վստահորեն կարող ենք պնդել, որ ռազմական գիտության հայեցակարգը կոչված պետք է լինի նպաստելու ՀՀ պաշտպանության, անվտանգության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության ապահովմանը: Այս դրույթները հիշատակվում են նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հոդված 14-ում [3]:

Հայաստանում ռազմական գիտության հայեցակարգի անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության ռազմական գիտության հայեցակարգի մշակումն ու ներդրումը ռազմավարական քայլ է՝ պայմանավորված մի շարք օբյեկտիվ գործոններով: Հայաստանում առայժմ չկա ռազմական գիտության զարգացման սկզբունքները, առաջնահերթություններն ու ուղղությունները որոշող միասնական հայեցակարգային փաստաթուղթը: Դա բերում է ոլորտային հետազոտությունների ոչ համակարգային բնույթին, գիտական և ռազմական կառույցների թույլ համադասմանը, ինչպես նաև՝ պաշտպանության և անվտանգության կիրառական խնդիրներին գիտության անբավարար ադապտացմանը: Տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրավիճակը պահանջում է ռազմական ռազմավարությունների և մարտավարությունների, զինված պայքարի գործող և նոր ձևերի, սպառազինության և ռազմական տեխնիկայի նոր նմուշների ստեղծման և կիրառման խորը գիտական մշակվածություն: Ժամանակակից պատերազմները իրենց մեջ առավել շատ են սկսել կրել հիբրիդային և անհամաչափ սպառնալիքներ, տեղեկատվական հակապայքարի տարրեր, անօդաչու տեխնոլոգիաներ և սպառազինության գերճշգրիտ համակարգեր: Առանց այդ հարցերին գիտական մոտեցում տալու հնարավոր չէ ապահովել պետության հուսալի պաշտպանությունն ու ռազմական անվտանգությունը: Ընդամին, վտահորեն կարող ենք փաստել, որ Հայաստանի ռազմական գիտությունը ազգային անվտանգության և զինված ուժերի կայուն զարգացում ապահովելու համար պետք է ստանա հստակ հայեցակարգային հենք: Պետության պատմական փորձը, ինչպես նաև ներկայիս վիճակը աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում պահանջում են ռազմական գիտության զարգացմանը ցուցաբերել հետևողական, համակարգային մոտեցում:

Անվտանգության մարտահրավերներին արդյունավետ դիմակայելու համար անհրաժեշտ է մշակել և ներդնել ռազմական գիտության ազգային հայեցակարգը, որն իր մեջ կներառի թե՛ համաշխարհային միտումները և թե՛ հայկական իրողությունները:

Ժամանակակից աշխարհում ռազմական սպառնալիքի բարձր մակարդակ ունեցող առաջատար երկրների շարքին կարող ենք դասել այնպիսի պետությունների, ինչպիսիք են Իսրայելը, Հարավային Կորեան, Թուրքիան, Ռուսաստանը, Չինաստանը, Իրանը, Ուկրաինան՝ սկսած 2014 թ-ից:

Իսրայելը մշտապես գտնվում է արտաքին ռազմական սպառնալիքների ազդեցության ներքո և ակտիվորեն զարգացնում է պաշտպանական համակարգին ինտեգրված ռազմագիտա-

կան հետազոտությունները: Հարավային Կորեայի փոխհարաբերությունները Հյուսիսային Կորեայի հետ երկար տարիներ է ռազմական լարվածության բարձր աստիճանի մեջ են գտնվում և Հարավային Կորեան, իր պաշտպանության ռազմական բաղադրիչի ապահովման հարցում հենվում է պաշտպանական տեխնոլոգիաների և ռազմավարական պլանավորման ոլորտների գիտական մշակումների վրա: Թուրքիան ազգային պաշտպանության հայեցակարգի շրջանակներում ակտիվորեն զարգացնում է ռազմական գիտությունը՝ կողմնորոշվելով հիբրիդային սպառնալիքների և ռազմարդյունաբերության ուղղությամբ: Ռուսաստանը հետևողականորեն իրականացնում է ռազմական ռազմավարության, սպառազինությունների նոր տեսակների, հիբրիդային հակամարտությունների ուղղությամբ ինտենսիվ գիտական հետազոտություններ: Չինաստանը ռազմական մշակումների հարցում կիրառում է իր հզոր գիտական ներուժը՝ մեծ ուշադրություն դարձնելով անհամաչափ ռազմավարություններին և բարձրտեխնոլոգիական գործողություններին: Իրանը իր ռազմագիտական ծրագրերը իրականացնում է միջազգային՝ մասնավորապես ԱՄՆ-ի և Իսրայելի, պատժամիջոցների պայմաններում: Ուկրաինան 2014 թ-ից այս կողմ զգալի կերպով ուժեղացրել է սեփական ռազմագիտական բազան՝ հարմարեցնելով այն ժամանակակից պատերազմների պայմաններին: Թվարկված բոլոր պետություններում ռազմական գիտությունը պաշտպանության և ազգային անվտանգության ռազմական բաղադրիչի ապահովման գործում առանցքային դեր է խաղում: Հայաստանի Հանրապետությունը՝ հաշվի առնելով իր աշխարհաքաղաքական վիճակը, կարող է կողմնորոշվել այդ պետությունների լավագույն օրինակներով, հարմարեցնելով դրանք ազգային իրողություններին:

Թվայնացումն ու կիրեռապառնալիքները, գիտատեխնիկական առաջընթացը պետության պաշտպանական համակարգը հանգեցնում են ռազմական դոկտրինայի փաստաթղթերում շեշտադրումների փոփոխությունների: Հաշվի առնելով կիրեռատարածությունում առկա սպառնալիքները, Հայաստանը կարիք ունի կիրեռանվտանգության մակարդակի բարձրացման, քանի որ ժամանակակից հակամարտություններն իրենց մեջ ներառում են կրիտիկական ենթակառուցվածքների թիրախավորումներ, կառավարման համակարգերի աշխատանքի խաթարում և ապատեղեկատվության մեխանիզմների լայն կիրառում:

Պաշտպանական ոլորտի ռազմավարական, հայեցակարգային փաստաթղթերի վերանայման հարցն առավել քան արդիական է նորօրյա Հայաստանի զինված պաշտպանության և ռազմական անվտանգության ապահովման գործում:

Հայաստանի Հանրապետության դոկտրինայ փաստաթղթերը հիմնականում կողմնորոշված են ավանդական ռազմական սպառնալիքներին և ոչ լրիվությամբ են համապատասխանում ժամանակակից անվտանգային, այդ թվում՝ հիբրիդային բնույթ կրող և կիրեռսպառնալիքներին: Դրանցով որոշված չեն տեղեկատվական և կիրեռգրոհներին հակազդելու հստակ մեխանիզմները, հաշվի առնված չեն վերջին հակամարտությունների փորձը, ներառյալ անօդաչու համակարգերի և նորագույն գերճշգրիտ զինատեսակների կիրառումը: Չգալի տեմպերով աճում է արհեստական բանականության տարրեր պարունակող զինատեսակների կիրառման մասնաբաժինը: Այս խնդրին հանգամանակից անդրադարձ է կատարված «AI Could Revolutionize War as Much as Nukes» հոդվածում, որտեղ մասնավորապես նշվում է, որ արհեստական բանականությունը կարող է վերափոխել պատերազմն այնպես, ինչպես դա ժամանակին արեց միջուկային զենքը՝ ընդգծելով միջազգային համագործակցության դերը ռազմական տեխնոլոգիաների զարգացման էթիկական կողմի և անվտանգության ապահովման առումով [4]:

Ուստի, Հայաստանում ռազմական գիտության համակարգի ձևավորման, դրա նպատակների և խնդիրների, ռազմական գիտության բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների ու գերակայությունների սահմանման նպատակով անհրաժեշտ ենք համարում իրականացնել ռազմական գիտության հայեցակարգի մշակումը:

Հայեցակարգը, հիմնվելով ազգային գիտական փորձի և ռազմական գիտության ոլորտում առկա միջազգային զարգացումների վրա, կնախանջի ռազմական գիտության գործող համակարգի բարեփոխումների ուղղությունները, մասնավորապես՝ ռազմական գիտության զարգացման հիմնական սկզբունքները, ռազմական գիտության փոխկապվածությունը այլ գիտությունների հետ, ռազմական կանխատեսման և ռազմավարական վերլուծության սկզբունքները, հետազոտությունների գերակա ուղղությունները:

Ռազմական գիտության հայեցակարգի նպատակը և խնդիրները

Համակարգային գիտական մոտեցման բացակայությունը բերում է ոլորտային հետազոտությունների դրվագային բնույթին, գիտական և ռազմական կառույցների թույլ համադասմանը, ինչպես նաև՝ պաշտպանության և անվտանգության կիրառական խնդիրներին գիտության ադապտացման անբավարար մակարդակին: Ոլորտային հետազոտական աշխատանքները նպատակային իրականացնելու և տեսակիրառական թեմաների սահմանման հարցում առանցքային դերակատարում կունենան

ռազմական գիտության հայեցակարգով սահմանված նպատակը, որը մեր կարծիքով կարող է ունենալ հետևյալ բովանդակությունը՝ *ստեղծել ազգային ռազմական գիտության միասնական համակարգ, որը կապահովի պաշտպանական քաղաքականության և ռազմական շինարարության գիտական հիմնավորումը, հետազոտական ենթակառուցվածքի զարգացումը, կադրերի պատրաստումը, նորարարական տեխնոլոգիաների ներդրումը, գիտական գիտելիքների ինտեգրումը պետության պաշտպանական համակարգին*: Այս նպատակն իր բովանդակային առումով կարելի է ներկայացնել հետևյալ ձևակերպումներով.

– *ռազմական գիտության զարգացման համար գիտական հիմքերի ստեղծումը* հնարավորություն կտա ձևավորելու պետության պաշտպանության և ռազմական անվտանգության ոլորտում հետազոտությունների անցկացման միասնական, հայեցակարգային մոտեցումներ,

– *պաշտպանական քաղաքականության գիտական ուղեկցման ապահովման*, արդյունքում հնարավոր կլինի մշակել զինված ուժերի մարտունակության բարձրացման ռազմավարական, օպերատիվ և մարտավարական հիմքերը,

– *ռազմական ոլորտին առաջադեմ տեխնոլոգիաների ինտեգրումը* կապահովի սպառազինության համակարգերում, մարտավարություններում, ռազմավարություններում և զորքերի կառավարման հարցերում ժամանակակից գիտական նվաճումների ներդրումը,

– *գիտական կադրերի պատրաստումը*, որպես հայեցակարգային խնդիր դիտարկելիս, պետք է նկատի ունենանք, որ ռազմական գիտության ոլորտի կայուն և շարունակական զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել բոլոր աստիճանների կրթության, որակավորման բարձրացման և գիտական կադրերի պատրաստման հուսալի համակարգ:

Ռազմական գիտության հայեցակարգի նպատակին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք խնդիրների լուծում, որոնք կարող ենք դասակարգել հետևյալ կերպ.

1. *Ռազմական գիտության ազգային համակարգի կառուցվածքի որոշում*՝ ոլորտային հետազոտությունների առանցքային ուղղությունների որոշում, այդ թվում՝ ռազմական ռազմավարության, օպերատիվ արվեստի, մարտավարության (ընդհանուր և ըստ զորատեսակների), ռազմական էկոնոմիկայի, կիրեռանվտանգության, տեխնոլոգիական զարգացման և այլն:

2. *Գիտական հետազոտությունների համակարգի մշակում*՝ ռազմական ոլորտում հիմնարար և կիրառական հետազոտությունների պլանավորման, ֆինանսավորման և իրացման մեխանիզմների ստեղծում:

3. *Ռազմական գիտության կառավարման համակարգի ձևավորում*՝ գիտական կառույցների, ռազմաուսումնական հաստատությունների, պետական մարմինների և արդյունաբերական ձեռնարկությունների միջև համադասման կազմակերպումը:

4. *Ռազմական կրթության համակարգի կատարելագործում*՝ գիտական մշակումների ինտեգրումը ռազմաուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում, հետազոտական աշխատանքների նպատակով կադրերի պատրաստում:

5. *Նորարարությունների ներմուծումը գինված ուժեր*՝ գիտական ձեռքբերումների և մշակումների՝ մարտական պատրաստության գործընթացներում արագ ադապտացման համար պայմանների ստեղծում:

6. *Սպառնալիքների կանխատեսման մեխանիզմների մշակում*՝ անվտանգության ընթացիկ և հեռանկարային մարտահրավերների գիտական վերլուծություն, պատասխան միջոցների մոդելների մշակում:

7. *Նորմատիվ-իրավական բազայի ստեղծում*՝ ռազմական հետազոտությունների, մտավոր սեփականության պաշտպանության և քաղաքացիական գիտական կազմակերպությունների հետ փոխգործության կարգավորումների իրավական մեխանիզմների մշակում:

8. *Արդյունավետության գնահատման համակարգի մշակում*՝ փոփոխվող իրադրությանը համապատասխան ռազմական գիտական գործունեության ճշգրտման և մշտադիտարկման համար չափանիշների ստեղծում:

Ռազմական գիտության հայեցակարգի սկզբունքները

Հայաստանի Հանրապետությունում ռազմական գիտության ձևավորումն ու զարգացումը պետք է իրականացվի մի շարք հիմնարար սկզբունքների հիման վրա, որոնք կարտացոլեն ինչպես ազգային շահերը, այնպես էլ անվտանգության ոլորտում ժամանակակից միտումները և գիտատեխնիկական առաջընթացը: Այդ սկզբունքները կոչված կլինեն ապահովելու ռազմական գիտական գործունեության նպատակաուղղված, կայուն և արդյունավետ զարգացումը՝ ի նպաստ ազգային պաշտպանության համակարգի: Կարող ենք աներկբա փաստել, որ ռազմական անվտանգության ապահովման համակարգային մոտեցումը հնարավոր չէ ապահովել առանց գիտական հիմնավորման: Այդ մասին իր «Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության հիմքերը. Ազգային անվտանգության քաղաքակրթական ասպեկտը» աշխատանքում անդրադարձ է կատարում Հ. Ս. Քոթանջյանը, մասնավորապես նշելով, Հայաստանի ռազմական քաղաքականության ձևավորման համակարգային մոտեցման

անհրաժեշտության մասին՝ հաշվի առնելով տարածաշրջանի քաղաքակրթական և աշխարհաքաղաքական առանձնահատկությունները [5]:

Ռազմական գիտությունը պետք է արտացոլի Հայաստանի արտաքին քաղաքական և ռազմավարական իրողությունները: Գիտական հետազոտություններում պետք է հաշվի առնվեն առկա և հավանական սպառնալիքները՝ ապահովելով պետության պաշտպանության արդյունավետ միջոցների և մեթոդների մշակումը: Այսպիսով, կարող ենք առաջարկել ռազմական գիտության զարգացման հետևյալ տասը հիմնական սկզբունքը.

1. *Ռազմական գիտության պետական նշանակության ու ռազմավարական ուղղվածության սկզբունք,*

2. *Ռազմական գիտության համակարգային և միջգիտակարգային լինելու սկզբունք,*

3. *Գիտական հիմնավորվածության ու սպացուցողականության սկզբունք,*

4. *Նորարարության և տեխնոլոգիական գերակայության սկզբունք,*

5. *Հարմարվողականության և օպերատիվության սկզբունք,*

6. *Տեսության և պրակտիկայի փոխգործության սկզբունք,*

7. *Գիտական դայրոցների զարգացման սկզբունք,*

8. *Տնտեսական արդյունավետության և միջոցների ռացիոնալ օգտագործման սկզբունք,*

9. *Միջազգային համագործակցության և ինտեգրման սկզբունք,*

10. *Օրինականության և էթիկայի սկզբունք:*

Հայաստանի Հանրապետության ռազմական գիտության հայեցակարգի մշակումը և ընդունումը ռազմավարական քայլ է՝ ուղղված ազգային անվտանգության և պաշտպանության ոլորտում ժամանակակից, կայուն և համակարգված գիտական ապահովման ձևավորմանը: Հայեցակարգում կսահմանվեն ռազմական գիտության զարգացման պետական մոտեցումների հիմքերը, կմատնանշվեն դրա արդիականացման ուղղությունները, միջազգային գիտական համակարգում ինտեգրման հնարավորությունները և այն՝ որպես ազգային ուժի լիարժեք բաղադրիչ դիտարկելու հեռանկարը:

Եզրակացություն

Հայաստանի ռազմական գիտությունը պետք է կառուցված լինի ավանդույթների և նորարարությունների համադրման վրա՝ հիմնվելով ռազմական և քաղաքացիական գիտական հաստատությունների համատեղ ներուժին: Այն պետք է լինի ճկուն՝ արձագանքելով սպառնալիքների դինամիկային, տեխնոլոգիական զարգացումներին և գլոբալ մարտահրավերներին: Մահմանափակ ռեսուրսների պայմաններում հատկապես կարևոր է ուղղորդված ներդրում-

ների իրականացումը առաջնահերթ գիտական ուղղություններում, արդյունավետ կառավարման մեխանիզմների ներդրումը և գիտական գործունեության համար բարենպաստ միջավայրի ձևավորումը:

Վստահորեն կարող ենք փաստել, որ Հայաստանի Հանրապետության ռազմական գիտության հայեցակարգը կրնո՞ղ ի հետևյալ առաջնահերթությունները.

– ռազմական գիտության համակարգի ինստիտուցիոնալ ամրապնդում,

– կադրային ներուժի և գիտական ենթակառուցվածքի զարգացում,

– միջազգային համագործակցություն և ազգային շահերի պաշտպանություն,

– գիտական արդյունքների դեպի կիրառական հարթակ փոխանցում:

Հայեցակարգի իրականացումը կպահանջի քաղաքական կամք, միջգերատեսչական համագործակցություն և համակարգային աշխատանք՝ պաշտպանության նախարարության գիտական հաստատությունների, կրթական կազմակերպությունների, մասնավոր հատվածի և սփյուռքի համատեղ ջանքերով: Միայն այս դեպքում հնարավոր կլինի հասնել կայուն առաջընթացի և ապահովել զինված ուժերին 21-րդ դարի պահանջներին համապատասխանող գիտելիքով, տեխնոլոգիաներով և ռազմավարություններով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի բանակի կերպավորման հայեցակարգ: <https://mil.am/hy/libraries/40>
2. ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն, 2020:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
4. **Tom Simonite.**, AI Could Revolutionize War as Much as Nukes. <https://www.wired.com/story/ai-could-revolutionize-war-as-much-as-nukes/>
5. **Քոթանջյան Հ. Ս.**, Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության հիմքերը. Ազգային անվտանգության քաղաքակրթական ասպեկտը: - Երևան., Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, 1992.
6. ՀՀ Ռազմական դոկտրին, 2007 թ.
7. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ: ՀՍՍՀ ԳԱԱ. - Երևան, 1980:
8. NATO Science for Peace and Security (SPS) Programme.
9. Stockholm international Peace Research Institute (SIPRI).
10. AI Could Revolutionize War as Much as Nukes.
11. The United Nations Could Finally Create New Rules for Space.

Сдана/Հանձնվել է՝ 23.04.2025

Рецензирована/Գրախոսվել է՝ 30.04.2025

Принята/Ընդունվել է՝ 07.05.2025